ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. **Անունը, ազգանունը՝**
Աննա Իվանյան

2. **Զբաղեցրած պաշտոնը՝**
ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածների նախարարության տարածքային կառավարման վարչության պետ

3. **Գործուղման վայրը և ժամկետները.**
Միացյալ Թագավորության Շոտլանդիայի **Աբերդինշիր** շրջան, Ինվերուրի քաղաք, հոկտեմբերի 20-ից հոկտեմբորի 23-ը

4. **Հրավիրող կողմը.**
Տեղական զարգացման նորարարության եվրոպական ասոցիացիա (AEIDL)

5. **Գործուղման նպատակը (աշխատանքային որ խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).**

Ծանոթանալ Եվրոպական գյուղական խորհրդարանի (6th ERP) աշխատանքներին, մասնակցել քննարկումներին և աշխատաժողովներին՝ գյուղական համայնքների զարգացման նոր մոտեցումներին և փորձին:

6. **Քննարկված թեմաները.**

- Եվրոպական գյուղական համայնքների փորձառությունները և գլոբալ մարտահրավերների լուծման մոտեցումները
- կլիմայական և բնապահպանական մարտահրավերների հաղթահարումը տեղական մակարդակում,
- կայուն գյուղական զարգացման քաղաքականություն, երիտասարդության մասնակցություն և համայնքային նախաձեռնությունների ամրապնդում,
- երիտասարդների, կանանց և համայնքային կառույցների մասնակցության խթանում,

- Թեմատիկ սեմինարներ՝ տեղական զարգացման մեթոդներ, համայնքային համագործակցություն, գյուղական հմտություններ, տեխնոլոգիական և թվային նորարարություններ:

7. **Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.**

- Այց Inverurie Community Campus՝ ERP-ի պաշտոնական բացում: Ներկայացվել են Doric լեզուն և տեղական պատմությունն, անցկացվել է արվեստի և ֆիլմերի ցուցադրություն, կազմակերպվել են մշակութային և ցանցային կապերի միջոցառումներ:
- Գյուղական համայնքների զարգացման ռազմավարությանը, երիտասարդների մասնակցությանը, համայնքային նախաձեռնությունների ամրապնդմանը և քաղաքականության մշակմանը առնչվող հարցեր:
- Աշխատաժողովներ հետևյալ թեմաներով.

- Համագործակցության մեխանիզմներ և ֆինանսավորման մարտահրավերներ.
- քաղաքականության մշակման գործիքները և տեղական, տարածաշրջանային, ազգային մակարդակներում կիրառման մեթոդները.
- ծրագրերի արդյունավետության չափման գործիքներ.
- գյուղական հմտությունների զարգացման ծրագրեր, համայնքային դիմադրողականություն, տեխնոլոգիական և թվային նորարարություններ:

Ուսումնական այցեր դեպի Շոտլանդիայի գյուղական համայնքներ, որոնց ընթացքում ծանոթացել ենք համայնքահեն զարգացման հաջողված օրինակներին՝ բնապահպանական, սոցիալական և տնտեսական ուղղություններով:

8. **Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.**

Չկան:

9. **Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.**

ERP-ից ձեռք բերված գիտելիքները և փորձառությունները կիրառել << համայնքներում՝ գյուղական զարգացման քաղաքականությունը բարելավելու և համայնքային նախաձեռնությունները ուժեղացնելու նպատակով:

10. **Ստորագրությունը, ամսաթիվը:**

28.10.2025թ.